ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/3314-21 առ "21" 12 2021թ.
[ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-41/21-03/61 պայմանագիրը
միակողմանի լուծելու վերաբերյալ]

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի
տնօրեն Կ. Աբրահամյանին

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «Ուղղիչ սարքերի ելքային լարման ձեռքով կարգավորման ֆունկցիայի ակտիվացում և կարգաբերում» ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ձեռքբերման նպատակով 2021թ. սեպտեմբերի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-41/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի միջև 2021թ. սեպտեմբերի 29-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-41/21-03/61 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ 2400000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել մուտքի թույլտվություն ստանալուց հետո 30 օրացուցային օր՝ մինչև 22.11.2021թ.:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ աշխատակիցներին մուտքի թույլտվությունը տրամադրվել է 2021թ հոկտեմբերի 22-ին:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) ծառայությունը պատշաճ կարգով չի մատուցվել, ուստի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ը պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի միջև 2021թ. սեպտեմբերի 29-ին կնքված №ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-41/21-03/61 պայմանագիրը և Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ Է. Մարտիրոսյան

Կազմեց՝
ԳԲառաջատարմասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08